

սաւորչական կրօնն ևս պարտադիր աւարկանե-
րի շարքն անցնել պետական դպրոցներէ ծրա-
գրում:

Կասկած չկայ, որ նախարարութիւնը, որն
այնքան նախանձախնդիր է քրիստոնէական բա-
րոյադիտութեան դաստիարակութեան, հարկա-
ւոր տնօրէնութիւնը կանէր և ամենայն հաւա-
նականութեամբ այդ աւարկան պարտադիր կը
յայտարարուէր: Սակայն Կովկասի հայ կրօնու-
սոյցների խնդիրը մնաց առանց ընթացք տալու
Վեհ. Տ. Մատթէոս Բ. Կաթողիկոսի մահուան
պատճառով:

Այժմ այդ խնդիրը նորից դարձել է և
Քիֆլիզի պետական դպրոցների հայ կրօնուսոյց-
ները Քիֆլիզի թեմի կառավարչի միջոցով ներ-
կայացրել են Նորին Վեհափառութեան խնդիր,
որով խնդրում են միջնորդել, ուր հարկն է, կրօ-
նի աւարկան պարտադիր դարձնելու վերայի-
շեալ դպրոցներում:

Ներկայ Վեհափառ Հայրապետը, որ Ինքը
նոյնպէս պետական դպրոցի սան է եղել
և անձամբ անձին զգացել է կրօնի աւար-
կայի կամուր լինելու դժբաղդ ազդեցութիւնը
հայ աշակերտութեան բարոյական-կրօնական
կրթութեան վրայ, որ իրեն նախկին առաջնորդ
Քիֆլիզի և ուսսահայ այլ թեմերի, դիտել է
բաղմիցս կրօնի ոչ պարտադիր լինելու սկզբուն-
քի ազդեցութիւնը, — անշուշտ ընթացք կը տայ
վաղուց հրապարակի վրայ դրուած այս յոյժ կա-
րեւոր խնդրին:

լութիւն:

Յունիսի 21-ին, երկկոյնան 6 ժամին Նորին
Սրբութիւնը առանձին գնացրով ժամանեց Քիֆ-
լիզ: Ընդունելութիւնը շատ փառաւոր էր, երե-
կոյեան հրաժառութիւն կար:

Նորին Վեհափառութեանը բացի իր չքա-
խըմբից ուղեկցում են Բեօսարաբիայի թեմի
առաջնորդ գեր. Ներսէս արքեպիսկոպոս, Շա-
մախու թեմի առաջնորդ գեր. Անանիա արքե-
պիսկոպոս և Հաշտարխանի թեմի առաջնորդ
գեր. Մխիթար եպիսկոպոս:

Յունիսի 22-ին, առաւօտեան ժամը 9-ին
Նորին Վեհափառութեանը պատիւ ունեցաւ ներ-
կայանալու Քիֆլիզի հայ հոգևորականութիւնը,
Գրիգոր քահ. Շերմազանեանը հոգևորական. կող-
մից ուղեւոր կարգաց՝ բարի գալուստ մաղթելով
Վեհին: Վեհափառը ողջունելով հոգևորականու-
թեան, յորդորեց սէր և միաբանութիւն ունենալ
Նոյն օրը ժամը 2-ին Նորին Վեհափառու-
թիւնը այցելեց Կովկասի Փոխարքայի օգնական
գեն. Շատիրովին, որը իսկոյն փոխ այցելու-
թեան եկաւ:

Նոյն օրը ժամը 10-ին Նորին Սրբութիւնը
գնաց Ռուսաց մայր եկեղեցիին:

Յետոյ ներկայացան Վեհին Քիֆլիզի մեշ-
չանների հասարակութեան ներկայացուցիչ-
ները:

Ժամը 5-ին Պարսից ընդհանուր հիւպատոսը
ներկայացաւ Վեհափառին և կարճատև սիրալիբ
խօսակցութիւնից յետոյ մեկնեց:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

(Ըստ Պատմ. թերթերից)

Յունիսի 15-ին, Մոսկուա. Ամենայն Հայոց
Կաթողիկոսը մեկնեց Կովկաս:

Մտակուսում Կաթողիկոսը ժուրնալիստների
հետ խօսելիս՝ յայտնել է, թէ էջմիածին վերա-
դառնալուց յետոյ առաջին հերթին նա գնելու է
դպրոցական բարենորոգումը: Նախագծուած են
նաև եկեղեցական բարենորոգումներ:

Յունիսի 17-ին, Նոր-Նախիջեանս. Նորին Վե-
հափառութիւնը առաւօտեան 8 ժամին ժամա-
նեց Բօստով և իր չքախըմբով գնաց Նոր-Նախի-
ջեան: Քաղաքը ցոյց տուեց փայլուն ընդունե-

ՄԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

(Հայ տպագրութեան 400-ամեակի առթիւ)

I

Ներկայումս մեզ անհրաժեշտ է ունենալ երկու
նոր գիր, որոնցից մէկը փոխարինէին ու-ի և լ-ի,
այսինքն բառի սկզբում և վերջը կարգացուէր ու, իսկ
ձայնաւորից առաջ և վերջը, ինչպէս այժմ գործ է
ածուած այդ երկու գիրը երբեմն մէկը միւսի տեղ: Այդ
նոր գրովը բոլորովին վերջ կը տանք թէ ու-ի և թէ լ-ի
գործածութեանը և թէ դրանց ուղղագրութեանը, որոնց
չնորհիւ մեր եկեղեցական դպրոցներում ընդունած է
երկու տեսակ ուղղագրութիւն՝ ու-ի և լ-ի, իսկ միւս գիրը

փոխարինելը իւ (10)-ին, որով վերջ կը տրուէր նաև իւ (իվ) և իւ (10) միաստակ աներին:

Որպէս զի այդ նոր գրերը ծառայեն իրենց բուն նպատակին և օգուտ տան մեզ, դրանք պէտք է շատ պարզ և ունենան, հեշտ լինի դրանց գրելը, քիչ տեղ բռնեն և գրելիս քիչ ժամանակ դործ դրուի դրանց վրայ, բացի դրանից մի մի գրով գրուեն և հայ գրերի ընդհանուր անից բացառութիւն չկազմեն: Ուստի հարկաւոր է լ-ի ծայրը կարել և ընդունել ու, որը կը կարգացուի այնպէս, ինչպէս վերը յիշեցի, իսկ ի-ի միջի գիծը կետաշրջան դարձնելով՝ ընդունել իւ (10):

Առաջարկածս անով կազմած գրերը բոլորովի նամապատասխանում են այդ նպատակին: Ունենալով այդ երկու գիրը, գործածութիւնից բոլորովին կը հանուեն՝ ու, լ, իւ (10) գրերը, նոյնպէս և ծւ գիրը, որը իւ-ի միացած անն է և առանձին ձայնի նշան չէ, բայց որպէս առանձին գիր կամայ-ակամայ պէտք է սովորեցնել, մինչդեռ ու-ը նոր գիրն այնքան փոքր է, որ այլևս կարիք չի լինի ծւ-ը միացած գրելու: Ուրեմն գործածութիւնից կը հանուի չորս գիր, բացի դրանից. կողմաւանք առանձին վարժութիւններով կարդալ-գրելու դասազան աներ սովորեցնելուց, թէ ուն ձայնաւորից առաջ կարդացուում է լ-ը և թէ իւ-ը կը պէտք է իվ կարդալ և երբ-իւ (10): Նոյնը պէտք է սովորեցնեն և լ-ը ուղղագրութիւնն ընդունողները, եթէ ցանկանում են, որ աշակերտները կարողանան ձեռնելն ընկած ամեն մի գիրը ուղիղ և վարժ կարդալ, թէ չէ աշակերտները կարող են չգիտենալ, թէ աղուէս բառը աղուէս թէ աղուէս պէտք է կարդալ: Աւելացնում եմ, որ քերականներից՝ Ա. Պալասանեանը և Արաբալեանն ուն ընդունում են երկրարբառ, որովհետեւ երկու գիր ունի, Ն. Տէր-Ղևոնդեանը՝ պարզ ձայնաւոր և առանձին գիր, իսկ Մ. Արեղեանը և Յ. Թումանեանը միայն պարզ ձայնաւոր և ոչ առանձին գիր, որովհետև ուն չեն դնում ոչ մի գիր ունեցողների շարքում և ոչ էլ երկրարբառների, իսկ իւ (10)-ն, բացի Տէր-Ղևոնդեանից, միւսներն ընդունում են երկրարբառ:

Գործածելով այդ երկու նոր գիրը, որոնց շնորհիւ և կը վերականգնի մեր հին ուղղագրութիւնը—մի օրինակութիւն, վերջ կը տրուի նոյնպէս ու-ի ուղղագրութեան մասին մոռուող անմիտ պայքարին, որը դարձել է կուսակցական խնդիր, և դեռ որ և է հետևանքի չհասած, առաջ բերեց վ-ի ուղղագրութիւնը. այնպէս որ, եթէ այսպէս շարունակուի, չուտով մենք աւելի ուղղագրութիւն կունենանք, քան թէ գրելու Միւս կողմից մեր քերականների մէջ եղած տարբերութիւնը այդ երկու գրի վերաբերմամբ կը վերանայ և մէկի ընդունած երկրարբառը միւսի համար պարզ ձայնաւոր չի լինի քանի որ այդ նոր գրերը մի-մի գրով գրուելով, բոլորի համար էլ դրանք պարզ ձայնաւորներ կը լինեն: Իսկ այն ժամանակը և աշխատանքը, որ մինչև օրս գործադրել ենք երկու գրի տեղ չորս գիր և զանազան վարժութիւններ սովորեցնելու վրայ, այսուհետև կհսով, եթէ ոչ աւելի,

խնայած կը լինենք: Աչքի առաջ պէտք է ունենալ և այն հանգամանքը, որ մի գիր գրելու տեղ 2—3 գրելը նոյնպէս կրկնակի ժամանակ և աշխատանք է պահանջում և աւելի տեղ, իսկ աչքի համար աւելի հիշատ է մի գիր իւրացնելը, քան թէ 2—3-ը, նոյնը կարելի տեսլ և արտասանութեան համար:

Աստու աւելի պարզելու համար, կարևոր եմ համարում, միւս երկրարբառների մասին, որպէս այդ խնդրի հետ կապուած նիւթ, միջանկեալ ասել և հետևեալը.—եթէ մենք երկու գիրը չունենալու պատճառով երկու-երեք անգամ աւելի ժամանակ և աշխատանք ենք դործ դնում, ապա միջան ժամանակ և աշխատանք վատնելիս կը լինենք նոյնպէս և միւս երկրարբառները սովորեցնելիս, որոնք աւելի շատ են, քան ու, լ և իւ (10) գրերը, քանի որ դրանք երկրարբառ կոչուում են միայն 2 գրով գրուելու համար: (Այդ երկու գրով գրուող երկրարբառներից կան և երեք գրով գրողներ, բայց կարդացուում են միատեսակ):

Իսկ եթէ դրանք մի-մի գրով գրուեն, կասկած չկայ, որ երկրարբառ չեն կոչուի, այլ պարզ ձայնաւոր գրեր, ինչպէս ա, ե, է, ը... ևայլն, բայց 2 կամ երեք գրով գրուելը ցոյց է տալիս նախ՝ մեր ձայնաւոր գրերի պակասութիւնը, որոնցով չենք կարողանում բոլոր պարզ ձայներն արտայայտել: Երկրորդ՝ նախնիքն այդ պակասը լրացրել են եղած ձայնաւոր գրերից առանձին նոր գրեր կազմելով, որոնք և կարդացուում են սրպէս մի գիր և առանձին ձայն, որոնք որ և է առնչութիւն չունին միւս ձայների և գրերի հետ և երրորդ՝ որպէսզի դրանք պահանանուեն միւս ձայնաւոր գրերից, գրել են միացած՝ 2 կամ 3 գրով, այնպէս որ ամեն մի երկրարբառ նոյնպէս մի պարզ գիր է, անկախ նրանից, թէ այդ երկրարբառը քանի գիր ունի և թէ առանձին ձայնի նշանագիր է, թէ ոչ, քանի որ մենք ունինք և այնպիսի երկրարբառներ, որոնք թէև զանազան են գրուում, բայց միատեսակ կարգացուում Օրինակ՝ եա-յա-իա, իւ-յու, եօ-յու-իօ, Բացի դրանից, ունենք և այլ երկրարբառներ, որոնք զանազան տեսակ են կարդացուում՝ այ ա, այ-այ, ոյ-ույ, ոյ-ոյ, ոյ-օյ Այդ երկրարբառները կարդուում ենք և գործածում որոշ կանոնների հիման վրայ:

Յովհաննէս Դասպարեանց

Վ.Ա.Ն.ՔԻ ԾԽԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Այս վերնագրի տակ «Հորիզոնը» իր № 130-ում մի անստորագրի յօդուած է տպագրել, որով իր դադած սրտին մի տեսակ սիրովանք պատճառելու և իր ընթերցողներին (հորիզոնամիտներին) ըստ սովորութեան մոլորեցնելու համար, աղաւաղել է եղելութիւնը:

Ով և այդ ժողովի մասին խօսէր, «Հորիզոնը» պիտի լռէր, որովհետև յունիսի 10-ի ծիտական այդ ժողովի մէջ տեղի ունեցած խայտառակութիւնը, շնորհիւ հորի-

ՄԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

(Հայ տպագրութեան 400-ամեակի առթիւ)

II

Առաջ բերած երկրաբաւաններից տեսնում ենք, որ գրած գրերը և արտասանութիւնը միմեանց չեն համապատասխանում: Այդ էլ հաստատում է այն, թէ ամեն մի երկրաբաւան առանձին վերցրած մի գիր է—ձայնաւոր, անկախ նրանից, թէ այդ ձայնաւոր գիրը մի տեսակ է կարգացում, թէ գանազան: Այդ երկրաբաւանները ստորեցնելու համար, հայ ուսուցիչը պէտք է գրանց մի մասի ձայնը և ձևը (գիրը), իսկ միւս մասի էլ միայն ձևը իւրացնել առաջ աշակերտներին գանազան կանոնների օգնութեամբ, որոնք բաւական գծուարացնում են նրա գործը, որովհետև աւելի երկար ժամանակ և աշխատանք են պահանջում: Բացի դրանից այդ երկրաբաւանները ցոյց են տալիս և այն, թէ այլ է պարզ ձայնը (ձայներ—ձայնաւորներ), այլ է բաղաձայնը (բաղաձայներ—հնչիւններ) և այլ է գիրը: Միեւնոյն պարզ ձայնը կարող է միջանի գիր ունենալ—հա—յա—իա և միեւնոյն գիրը գանազան տեսակ կարգացուել: Սրինակ՝ ու ձայնաւորը միւս ձայնաւոր գրերից յետոյ, բացի է-ից, բարդացում է ւօ, իսկ բառի մէջը և վերջը—օ: Ո-ն զրոււմ է և այսպէս օ—ւօ, ւօյ, ուօ, ւօյ:

Այս բոլորը ցոյց են տալիս, որ երկրաբաւաններ չկան և մեր քերականների երկրաբաւան ընդունելը, դրանց երկրաբաւան տեսանկյունից միայն 2—3 գրով գրուելու կամ ծանօթ գրերից կազմուելու համար, բոլորովին անհիմն է և սխալ, քանի որ այդ երկրաբաւան կոչուողներն էլ, ինչպէս տեսանք, այնպիսի ձայնաւոր գրեր են, ինչպէս ա, ն, է... և դրանք գանազանուում են մի մի գիր ունեցող ձայնաւորներից այնպէս, ինչպէս ըն լի-ից, պ-ն լի-ից, գ ը թ ից, կ-ն ը-ից եայնու Չարմանային այն է, որ մենք ամեն մի երկրաբաւան, ինչպէս և միւս գրերը (մի-մի գրով գրուողները)՝ ա, ը, զ, ղ, ն... կայն ստորեցնում ենք որպէս առանձին գիր և ձայն, բայց այդ երկրաբաւանները, ինչպէս առաջ բերած գրերից ամեն մէկն ընդունում ենք առանձին ձայնի նշանագիր, չենք ընդունում որպէս առանձին ձայներ և գրեր, չենք զննում դրանց ձայնաւոր գրերի շարքում և չենք հաշուում նայերէն գրերի հետ:

Այս սխալի հետեանքն է, որ մենք մինչև այժմ էլ սխալմամբ ընդունում ենք, թէ հայերէն գրերը միայն 38 կամ 39 է, (39 գիր ընդունում է Արարաջեանը և-ի հետ, իսկ Տէր-Ղևոնդեանը՝ ա-ի հետ, միւսները՝ 38): Ուղիղ է, որ մի-մի գրով գրուողները 38 են, որոնցից ՚յ—յն և լլ—լն համանուն են, այսինքն միատեսակ են կարգացում, այնպէս որ, եթէ ՚յ-ն ու լլ-ն կամ յ-ն և լ-ն, այդ երկուսից մէկը կամ միւսը չլինի, մենք ոչինչ չենք կորցնի, այլ կօպտուենք, որովհետև երկու գիր կը պակասի և դրանց ստորեցնելու վրայ գործ գրած ժամանակը կը խնայենք, իսկ և-ը նւ-ի միացած ձևն է, որ

տեսնան որք կայարանից մինչև Վանքի եկեղեցին և հետեւալ օրերը այցելութիւնների ժամանակը: Երէկ առաւօտեան Վեհափառ Կաթողիկոսը թաւ վեհարանից Վանքի եկեղեցու բակը և արեհաճեց բաւական երկար դիտել բակի նստակառոյց գայրոցական շինութիւնը: Յետոյ Վեհր մտեցաւ Այ. Մանթաշեանի դամբարանին և Գար. Սուգուկեանցի գերեզմանին և հագուց տաց:

Երէկ առ. ամսոյս 25-ին Վեհափառին ներկայացաւ Հայ Ուսուց. Միութեան վարչութիւնը, որ ներկայացրեց մի ուղերձ գեղեցիկ կազմով:

Վեհափառ Կաթողիկոսին ներկայացան Հայոց Ազգագրական Ընկ. վարչութիւնը և Գրկասեան Թանգարանի Մնայուն Յանձնաժողովի անդամները:

Երէկ, ամսոյս 25-ին, երեկ, ժամը 5-ին Վեհափառը վեհարանից մեկնեց դէպի երկաթուղայարանը:

Կարգադրիչ Մասնաժողովի անդամների առբից յետոյ՝ առանձին կառքով երկու բահաւայ բերում էին Հայրապետական խաչն ու գանազանը: Վեհ. Կաթողիկոսի շքակառքի ետևից գալիս էին առանձին կառքերով ներսէս և Առանիա արքեպիսկոպոսները, Մեսրոպ, Խորէն և Կիրեմ եպիսկոպոսները, Բաղրատ և Մատթէոս վարդապետները և այնուհետև Կաթող. Ընդունելութեան յանձնաժողովի անդամները:

Երկաթուղու կայարանի արքայական սեւեակներում ժողովուել էին շատ պատգամաւորութիւններ, ի թիւս որոց Փոխարքայի առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ Լ. Նանդուշեան: Այ. Քիչմիշեան սղջերթ մաղթեց Վեհափառին Թիֆլիզի հայութեան կողմից:

Վեհափառի արտակարգ գնացքը, որ վաղէկ Թիֆլիզի Յանձնաժողովը, շարժուեց 6 ժամ 10 րոպէին Թիֆլիզի ժամանակով, շեղեցէնէն իջ բացազանչութիւնների տակ: Վեհափառը ընտում էր սայօն-վաղօնի պատուհանից:

Թիֆլիզի թեմի կառավարիչ Կիրեմ եպիսկոպոսը կը վերագառնայ Դարարիխասայից Թիֆլիզ:

—ինչպէս յիշել եմ վերը, առանձին ձայնի նշանադիր չէ, կը մնայ 35 ձայն 38 գրով: Այդ սխալի շնորհիւն է, որ մենք հայերէն գրերը սահմանափակել ենք միայն մի-մի գիր ունեցողներով—38-ով, հաստատ գիտենալով, որ այդ 38 գրով չենք կարողանում մեր ունեցած բոլոր ձայներն արտայայտել, իսկ այդ պակասը լրացնում ենք նրկըրարքառներով: Գրանք այն ձայների գրերն են, որոնք մինչև այժմ չունին իրենց համապատասխան սեփական գրերը—ամեն մէկը իր մի գիրը: Հետևապէս և ճիշտ չէ, թէ մենք ունենք միայն 38 գիր, մինչդեռ առաջ բերած օրինակները և փաստերը հաստատում են, թէ մենք աւելի շատ գրեր և ձայներ ունենք, քան թէ մեր մինչև այժմ ընդունած 38 գրերն է: Մեր ունեցած ձայների և գրերի ճիշտ թիւը որոշելու համար պէտք է այդ 38 գրի հետ հաշուել անպատճառ և երկրորդաբանութիւնը, որոնք լրացնում են այդ պակասը:

Մեր քերականների ընդհանուր սխալը երկրորդաբանութիւնն է և այս սխալն առաջացել է նախ՝ օտարներին կուրօքէն էտեկուց և երկրորդ՝ ձայների և գրերի նշանակութիւնը չհասկանալուց և չկարողանալով մէկը միւսից զանազանելու: Գրանք սխալուել են երկրորդաբանների 2—3 գրով գրուելուց, իրենք ևս իրենց կողմից սխալիցներով ուրիշներին: Այդ սխալը պարզ երևում է նրանից, որ գրանք ձայնաւոր գրերի և երկրորդաբանների վերաբերմամբ, մանաւանդ վերջինիս, միմեանցից խիստ տարբերում են: Ամեն մէկն ունի իր առանձին երկրորդաբանները և մէկի ընդունածը միւսը չի ընդունում երկրորդաբան կամ ընդունում է այլ ուղղութեամբ: Մեր քերականները ոչինչ չեն ասում նոյնպէս, թէ գրանք ինչու են երկրորդաբան կոչում, բացի Մ. Արեղիանից, որի ասածը՝ թէ «երկրորդաբան երկու ձայնաւորի միացած արասանութիւնն է մի չնչով իբրև մի վանկ» (ԷԱՆՍԱՐԿ. քեր. 2 երես 17), նոյնպէս ճիշտ և զարդ չէ, պէտք է լինի—կարգացում է ինչպէս մի գիր:

Հարկաւոր եմ համարում այդ երկրորդաբանների մասին յայտնել և այն, որ գրանց պէտք է ընդունել որպէս ժամանակաւոր գրեր, որոնք վաղ թէ ուշ պէտք է վերածուին մի-մի գրի, ամեն մէկը պէտք է մի ձայնի նշանադիր լինի և ունենայ իր պարզ և որոշ ձևը, հայերէնի ուսման զործը հնչապնելու և արդիւնաւէտ դարձնելու, որովհետև, ինչպէս ասացի, ներկայումս բաւական դժուարացնում են հայերէն գրել կարգով սովորեցնելը, պահանջելով աւելի երկար ժամանակ և շատ աշխատանք, քան թէ իսկապէս պէտք է գրանց վրայ գործ ձնել, միևնոյն ժամանակ ստացած արդիւնքը քիչ է և չի համապատասխանում զօրծ դրած ժամանակին ու աշխատանքին:

Յարմար առիթը ներկայացել է, ասելու ենք հայ տպագրութեան 400-ամեակը, ուստի այդ տօնը յաւերժացնենք այնպիսի գործով, որը համապատասխանէր թէ գրերի գիւտի և թէ տպագրութեան նպատակին—վերացնէր բոլորովին այդ դժուարութիւնները, որով հայերէն գրերը կը գտնուէին իրենց գրերի մէջ, կը ծառայէին

իրենց բուն նպատակին, այն է՝ մեզ, և ոչ թէ մենք գրանք, ինչպէս հիմա է: Որովհետև ուսման հիմքը կազմում են գրերը, որոնց պարզ և որոշ լինելուց էլ կախում է ուսման յաջողութիւնը, ուստի այս անգամ բաւականանալը միայն առաջարկածս երկու գրի գործածութիւնը մտցնելով: Այդ երկու գրովը մենք որնէ նորութիւն չենք մտցնում, այլ եղած գրերի ձևը փոխում ենք, տալով նրանց աւելի պարզ և դիւրին ձև: Դա նորութիւն էլ չէ, քանի որ մեր նախնիքն այդ կողմից մուգանից աւելի գործնական մարդիկ էին: Նրանք յունարէն և ասորերէն գրերից ազատուելու համար ոչ մի ջանք չի նայեցին իրենց սեփական հայերէն գրերն ունենալու, որը յաջողուց և. Մեսրոպի ջանքերով 5—6 դար շարունակ գործ ածելով և Մեսրոպի հնարած նրկաթագրերը (մեր այժմեան գլխատուները), փոխեցին ըռլորագրերի (մեր հասարակ տուները), բացի դրանցից, ընդունեցին օ և ֆ գրերը, մացրին տպագրութիւնը, իսկ մենք այժմ միջանի գրի գրեր ենք, ծառայում ենք այդ գրերին, որ գրանց գոյութիւնը ինչ գնով էլ լինի պահպանենք, էլ ուրիշ ոչինչ: Բայց դա մեզ շատ թանկ է արժենում: Օգտուենք այդ աստից դրական կերպով և ոչ թէ լոկ խօսքերով ու բարի ցանկութիւններ յայտնելով:

Յովհաննէս Դատպարեանց

ՄԻ՛, ՄԻ՛ ՅԵՂԱՇՐՋԷՔ ՓԱՍՏԵՐԸ

Թեմիս կառավարիչ Տ. Եփրեմ եպիսկոպոսը ինչ որպէս եկեղեցու աւագ-երէցի, բերանացի պատուիրել էր լայտնել Վանքի եկեղեցու ծխականներին և ժողովի հրաւիրել նրանց՝ ընտրելու Յովն. Մարիամեան դպրոցի հոգաբարձութեան համար պատուիրակներ՝ համաձայն կովկասի փոխարքայի ժամանակաւոր կանոնների և ոչ կաթողիկոսից տուած ծխական կանոնների, որոց մէջ մեծ տարբերութիւն կայ ծխականների իրաւունքների և ընտրութեան ձևի մասին:

Յունիսի 3-ին նշանակեցի առաջին ծխական ժոզովը, որը չկայացաւ ներկայ եղող ծխականների փոքրամասութեան պատճառով:

Յունիսի 10-ին նշանակեցի երկրորդ ու վերջին ժողովը՝ ներկայ էին ծխականներից 122 հոգի: Այլ ծխականների ներկայ լինելու կարգադրութիւնը ըստ իմ հարցման թեմիս Սրբ. կառավարիչի կողմից թոյլատրուած էր միմիայն յունիսի 10-ի ժողովի համար:

Սակայն երբ շնորհիւ միխումբ ծխականների և ոչ ծխականների տեղի ունեցաւ այն խայտառակ սկանդալը, եւ ստիպուած եղայ, որպէս եկեղեցու աւագ քահանայ և պատասխանատու հոգ. իշխանութեան առաջ ընտրութիւնների համար, ժողովը փակել՝ յետաձգելով ընտրութիւնը հետեւալ կիրակի յունիսի 17-ին: Եւ ՚ի նկատ ունենալով այն կիրակուայ խայտառակութիւնն